

տեննադարաններուն մէջ՝ կը թուի շատոնց ինկած են Վենետիկի մատենադարանն ու հասկաքարդուած վարդապետ մատենագիրներէն. իր դրաքառն ունի խաթուն արծաթի ձուլուած մը՝ տարբեր ժամանակին լատինախառն անոճ ոճէն, որ ճարակելու վրայ էր Ոսկան Երեւանցիին հրատարակութիւններովը. իր տպուած քանի մը հատուածներէն կը համարձակինք ընել այս դատատանն ալ: Երեմիա Չելեպին՝ ցաւսիրտ անձնաւորութիւն մըն ալ է եղեր, ու իր զրական յառաջադիմութիւնները՝ դարի մը կանխուիմն են Վենետիկի ու Պոլսի զրական նախանցեալ դարի զարգացումներուն. իր ծագումն է Ակնէն 1, 1600 թուին:

Դարձեալ նոյն 1600 թուէն է հուլիաւոր և հին Տիւզեանց ծագումը՝ Տիվրիկէն, ուրկէ նոյն թուին զաղթած է Յարութիւն անուն կաթողիկ հայագէին<sup>2</sup> Կ. Պոլսի, և իր ճարտար սկիւրչութեան շնորհիւ յարաբերութեան մտնելով կայսերական պալատան հետ՝ կանուանի հոն «բարձի սկիւրչ», կը բանայ իր անունովը կայսերական դանձատան քովն սկիւրչութեան խանութ մը, որ մինչև 19րդ դարի սկիւրչը կանգուն էր Տիւզեան անունով. Տիւզեանք 18րդ դարէն սկսեալ բնակած են Գուրուչէճէ գիւղաւանը: Յարութիւնի մահէն ետքն՝ արքունի սկիւրչապետութիւնը կը մնայ իր որդիին Մահտեսի Սարգիսի, որուն բարձրահասակ, կաշմբուն և ուզորոզ՝ կազմուածքն առաջին անգամ տեսնելով Վեհ. Սուլթան Ահմէտ Գ. արքունի պարտիզին մէջ «սա Տիւզ ինծի կանչեցէք» կը հրամայէ, որմէ կը սկսի ալ տոհմին Տիւզ անունը: Տիւզ Սարգիսէն կը ծնին Տիւզ Յովհաննէս ու Տէվլէթ աղաները, և Տիւզ Յովհաննէսի որդին էր Հոճա Միքայէլ Չելեպին (ծն. 1724 Վիսճ. 1785) Տիւզեան գերդաստանին փառաւորագոյն զարդը, որ միապէս հմուտ էր նկարչութեան, սկիւրչութեան և տարրագիտութեան ու ժամանակա-

1. Վարդ Տէր Կոմիտասի, էջ 9:

2. Ազգաբանութիւն Զարմիմ Տիւզեանց. Ջ. Գարբիէլ Մէմէվիշեան, Վիսննա, էջ 6-7:

3. Նոյն. ամր, էջ 9-10: